


ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРЦАХСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ



ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕННЫЕ ЗАПИСКИ



$$E=mc^2$$



2 (13) * 2006

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

СТЕПАНАКЕРТ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ
(Ստեփանակերտ, նոյեմբեր 2006)
I մրցանակ

ՀՏԴ 347.1

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱԿՅՈՒԹՅԱՆ
ԲԱՐՉՐԱՅՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՐ**

Ա. Ն. Հարությունյան
Իրավագիտություն 3-րդ կուրս

Յուրաքանչյուր մարդ պետք է որոշ չափով օրենքներ
իմանա. եթե նա դրանք գիտի բավականաչափ, որպեսզի
դրանց ճանկը շինկնի, ապա ի՞նչ իրավունքների
խախտման մասին կարող է խոսք լինել:

Հենրի Ծոու

Մարդը, լինելով հասարակության հիմնական և անփոխարինելի անդամը, օժտված է անօտարելի բնական և դրական իրավունքներով, որոնք հաճախ այս կտրվ այն՝ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հետևանքով խախտվում են և որոնց պաշտպանելու առաքելությունը հավասարապես պատկանում է թե՛ պետությանը և թե՛ հենց նրան՝ մարդուն: Իսկ որպեսզի մարդ իմանա իր իրավունքներն, ազատություններն ու պարտականությունները և որպեսզի կարողանա պաշտպանել դրանք, պետք է նա օժտված լինի իրավագիտակցությամբ, այսինքն իրավագիտակցության բարձր մակարդակը իրենից ներկայացնում է իրավունքների պաշտպանության իրավական երաշխիք:

Իրավաբանական գրականության մեջ և հատկապես տնտեսության մեջ բազմազան ու առարքեր են «իրավագիտակցություն» հասկացությունը բնութագրող սահմանումները, սակայն առավել բնորոշելի է այն տեսակետը, համաձայն որի՝ **իրավագիտակցությունը**, լինելով հասարակական գիտակցության ձևերից մեկը, մարմնավորում է քաղաքացիների հայացքները, պատկերացումները, տրամադրությունները, զգացմունքներն իրավունքի և օրինականության էության, սկզբունքների, գործող և տապալության առաջարկվող իրավական նորմերի նկատմամբ¹:

Իրավագիտակցության դերի և նշանակության մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար պետք է դիտարկել նրա գործառույթները, որոնք են՝

- ճանաչողական
- գնահատման
- կարգավորման:

Ճանաչողական գործառույթին համապատասխանում է իրավական գիտելիքների որոշակի հանրագումար, որը հանդիսանում է ինտելլեկտուալ (մտածողական) գործունեության արդյունք և արտահայտվում է, այսպես կոչված, «իրավական նախապատրաստություն» հասկացությամբ:

Գնահատման գործառույթն առաջանում է անձի որոշակի հուզական վերաբերմունքը իրավական կյանքի տարբեր կողմերին և երևույթներին՝ փորձի և իրավական պրակտիկայի հիման վրա:

Իրավագիտակցության բովանդակության մեջ ներառում է գնահատման հարաբերությունների չորս հիմնական տեսակներ՝

- վերաբերմունքը իրավունքի և օրենսդրության նկատմամբ (իրավունքի սկզբունքներ, նորմեր, ինստիտուտներ)
- վերաբերմունքը շրջապատող միջավայրի, իրավական վարքագծի և գործունեության օբյեկտների նկատմամբ (հանցավորություն, հանցագործ, հանցագործություն)
- վերաբերմունքն իրավապահ մարմինների նկատմամբ (դատարան, դատախազություն, արդարադատություն, ներքին գործերի բաժին՝ ներառյալ նրանց գործունեությունը)
- վերաբերմունքն իր իրավական վարքագծի նկատմամբ (ինքնազննահատում)²:

Լինելով իրավունքի անուղակի աղբյուր, իրավագիտակցությունն իր արտահայտությունն է գտնում իրավական ակտերում. նրա միջոցով և շնորհիվ է, ինչպես Հեզլին է ասել, օրենսդիրը «ըմբռնում իր դարաշրջանի ոգին» և այն արտացոլում իրավական ակտերում³: Այս մտքին համահունչ հարկ է մնջբերել ֆրանսիացի փիլիսոփա Ժան Ժակ Ռուսոյի խոսքերը. «Իմաստուն օրենսդիրն իր գործունեությունը սկսում է ոչ թե օրենքների հրատարակությունից, այլ տվյալ հասարակության համար դրանց պիտանիության ուսումնասիրությունից»⁴:

Իրավական նորմերն իրենց հերթին ազդեցություն են ունենում քաղաքացիների իրավագիտակցության բարձրացման, իրավունքի սկզբունքների և նորմերի մասին ճիշտ պատկերացում ձևավորելու, ինչպես նաև իրավահարաբերությունների, պատասխանատվության վրա: Իրավագիտակցությունը կարգավորիչ դեր է խաղում իրավակիրառ, այդ թվում իրավական ակտերի ընդունման և կոնկրետ որոշումների կայացման ընթացքում:

Իրավագիտակցությունն ակտիվ ներգործություն է ցուցաբերում հասարակությունում և պետությունում տեղի ունեցող կենսական գործընթացների ամբողջ բազմազանության կարգավորման վրա, նպաստում է քաղաքացիների, սոցիալական խմբերի համախմբմանը, հասարակության ամբողջականության պահպանմանն ու ամրապնդմանը, նրանում կարգ ու կանոնի հաստատմանը: Հասարակության առողջ իրավագիտակցությունը, քաղաքացիների հարգանքը օրենքի նկատմամբ հանդիսանում են պետության ամրապնդման հիմքը, քաղաքական և իրավական համակարգերի փոխհարաբերության գործոնը: Արդարության մասին իրավական պատկերացումները, մարդու իրավունքների և պարտականությունների գիտակցումը, թույլատրություններն ու արգելանքները ներգործում են մարդու վարքագծի ձևավորման վրա՝ հասարակական կյանքի իրավական ոլորտում:

Այսպես, իր երկրի օրենքները չիմացող ժողովուրդը վարում է այսպես կոչված «արտաիրավական» կյանք կամ բավարարվում է իրավունքների մասին ինքնուս և անկայուն գիտելիքներով:

Իրենց պարտականությունները չիմացող մարդիկ ի վիճակի չեն պաշտպանելու դրանք, չգիտեն դրանց սահմանները:

Իրենց լիազորությունները չիմացող մարդիկ քնահաճորեն սահմանազանցում են դրանք կամ էլ վեհերելով դրանք զիջում են ուժեղին:

Իրենց արգելանքները չիմացող մարդիկ հեշտությամբ մոռանում են զսպվածությունը և կարգուկանոնը⁵:

Կարևորագույն իրավական ակտերի մշակման ընթացքում մեծ դեր է խաղում ժողովրդի զանգվածային իրավագիտակցությունը, որն իր արտահայտությունն է գտնում հասարակական կարծիքներում: Զանգվածային զարգացած իրավագիտակցությունը, հասուն իրավագիտակցությունը և առանձին քաղաքացիների իրավական ակտիվությունը հիմք են հանդիսանում քաղաքակիրթ հասարակությունում իրավունքի զերակայությանը: Քաղաքացիների իրավագիտակցության բարձրացումը հանդիսանում է իրավախախտումների կանխարգելման, հանցավորության դեմ պայքարի իրականացման արդյունավետ միջոց:

Իրավաձևավորման, օրենսդրական գործունեության ընթացքում էական նշանակություն ունի օրինագծերի կամ կոնկրետ իրավական կանոնակարգի զանգվածային քննարկումը: Որպես ասվածի վկայություն պետք է դիտարկել ԼՂՀ Սահմանադրության նախագծի հանրային քննարկումները, որոնք որոշակի չափով կբարձրացնեն ժողովրդի ընդհանուր իրավագիտակցության մակարդակը:

Իրավագիտակցությունն օգնում է տալ արդարացի գնահատական կոնկրետ իրավաբանական փաստերին, որոշել անձի իրավաչափ և հակաիրավական գործողությունները, գնահատել կոնկրետ իրավական փաստաթղթերի բովանդակությունը:

Ինքնին իրավական պետության էությունը որոշվում է նրանով, որ քաղաքացիները օժտված են գիտակցության բարձր մակարդակով և քաղաքացիական հասարակության առջև պատասխանատվության զգացումով: Այդ իսկ պատճառով բոլոր քաղաքացիներին հասարակական գիտակցությամբ դաստիարակելը իրավական պետության կառուցման գործընթացի բաղկացուցիչ մասն է:

Իրավական գործունեության բոլոր ոլորտներում քաղաքացիների մասնակցության արդյունավետությունը նշանակալից չափով կախված է իրավագիտակցության մակարդակից: Այդ իսկ պատճառով քաղաքացիների դաստիարակությունը, որի էությունը կայանում է իրավագիտակցության բարձր մակարդակի ձևավորման մեջ, իրավունքի և օրինականության նկատմամբ խորին հարգանք տածելով, իրավական նորմերի պահանջների անշեղ կատարման համար պատասխանատվության զգացումով, կազմում է անհրաժեշտ պայման քաղաքացիների սոցիալ-իրավական ակտիվության բարձրացման, հասարակության իրավական կուլտուրայի ձևավորման համար, ինչպես նաև երկրում օրինականության և իրավակարգի ամրապնդման մեջ:

Հասարակական իրավագիտակցության առավել խորը իմացության համար անհրաժեշտ է դիտարկել այսպես կոչված **անհատական իրավագիտակցության** առանձնահատկությունները: Անհատական իրավագիտակցությունը հասարակական իրավագիտակցության հետ հարաբերակցվում է այնպես, ինչպես եզակին ընդհանուրի հետ: Անհատական հասարակական իրավագիտակցությունը սկզբնական բջիջն է, որի հիման վրա ձևավորվում է հասարակական իրավագիտակցությունը:

Իրավագիտակցությունը, ինչպես և հասարակական գիտակցության մյուս ձևերը, օժտված է բարդ կառուցվածքով, որն իր մեջ ներառում է իրավական գաղափարախոսություն և իրավական հոգևբանություն: Ընդ որում, իրավագիտակցության այս տարրերից յուրաքանչյուրն օժտված է իր յուրահատկությամբ, միաժամանակ նրանք հանդես են գալիս անբախտելի միասնականությամբ:

Իրավական գաղափարախոսությունը, լինելով իրավագիտակցության բաղկացուցիչ մասերից մեկը, իրենից ներկայացնում է գաղափարների, ստեղծագործությունների, հայացքների, պատկերացումների, սկզբունքների ամբողջություն, որոնք տեսականորեն արտացոլում և զնահատում են հասարակական կյանքի իրավական երևույթները: Այն իր մեջ ներառում է այնպիսի գաղափարներ և տեսություններ, ինչպիսիք են սեփականության երաշխավորումը և պաշտպանությունը, անձի իրավունքներն ու ազատությունները, ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը պետությունում, դատական իշխանության անկախությունը, բնության պաշտպանությունը և նրա պաշարների արդյունավետ օգտագործումը, հանցավորության դեմ պայքարը, պետությունների և ազգերի միջև համագործակցության զարգացումը և ամրապնդումը⁶:

Իրավական **հոգևբանությունը** զգացմունքների, սովորությունների, տրամադրությունների, ավանդույթների ամբողջություն է, որոնցում արտացոլվում է տարբեր սոցիալական խմբերի, կոլեկտիվների, առանձին քաղաքացիների հոգևբանական վերաբերմունքը իրավունքի, նրա առանձին նորմերի, իրավակարգի, հասարակությունում գործող իրավական կառույցների և նրանց գործունեության նկատմամբ⁷: Իրավական հոգևբանությունը կարևոր ներգործություն է ունենում քաղաքացիական հասարակության իրավական զարգացման, իրավական կարգի վրա: Քաղաքացիական հասարակությունում որոշակի հոգևբանական վերաբերմունք է մշակվում իրավունքի, իրավական երևույթների վերաբերյալ, որոնք արտահայտվում են մարդկանց հայացքներում, զգացմունքներում, սովորույթներում, ավանդույթներում: Այստեղ կարևոր է նաև անձի զարգացումը, և ինչպես Կ.Մարքսն է նշել. «Անհատի զարգացումը պայմանավորված է մյուս բոլոր անհատների զարգացումով, որոնց հետ նա գտնվում է ուղղակի կամ անուղղակի հարաբերության մեջ»⁸:

Իրավագիտակցության կառուցվածքում անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել ոչ միայն իրավունքի (օրենքի) իմացությունը, այլև վերաբերմունքը դրա նկատմամբ, այն ի կատար ածելու պատրաստակամությունը: Այս կապակցությամբ ոչ այնքան ճիշտ է ձևակերպված «օրենքի հնազանդ քաղաքացի» արտահայտությունը: Այստեղ գործում է առավել բարդ մեխանիզմ. անձը իրավունքի նորմերին հետևում է իր մոտ առկա արժեհամակարգի միջոցով:

Անձի իրավական ձևավորման գործընթացում մեծ ազդեցություն է ունենում այն հոգևոր-մշակութային և իրավական մթնոլորտը, որոնք գերիշխում են տվյալ հասարակությունում: Որքան ամուր է հասարակության իրավակարգը, որքան բարձր է նրա անդամների կազմակերպվածությունը և կարգապահությունը, որքան խորն է հարգանքը օրենքների և օրինականության նկատմամբ, այնքան մեծ նշանակություն ունի իրավական կուլտուրայի, իրավական գիտելիքների յուրացման գործընթացը: Եվ ընհակառակը,

անօրինականության և կամայականությունների մթնոլորտը, օրենքների նկատմամբ նիհիլիստական (ժխտողական) վերաբերմունքը, անհաստատունությունը, անկարգությունը խոչընդոտում են անձի իրավական ձևավորման գործընթացին, առաջացնում են հակասոցիալական ուղղվածություն, հակասոցիալական վարքագիծ, որոնք վերջին հաշվով հանգեցնում են անձի արժեքային կողմնորոշումների համակարգի շեղման:

Իրավագիտակցությունը կարելի է բնութագրել որպես իրավունքի վերաբերյալ գիտելիքներ՝ այդ բառի գործնական-կիրառական նշանակությամբ համապատասխան: Իրավաբանական գրականության մեջ տարածված է այն բանաձևը, համաձայն որի՝ իրավագիտակցության հիմնական գաղափարը հանդիսանում է օրինականությունը: Ռուս իրավագետ Վ.Ն.Խրոպանյուկի կարծիքով «որքան բարձր է պետության քաղաքացիների իրավագիտակցության մակարդակը, այնքան ճշգրտությամբ է իրականացվում իրավական նորմերի պատվիրանները: Իրավագիտակցության զարգացումն ապահովում է իրավական պահանջների կամավոր, խորը գիտակցված իրականացում, դրանց ճշտության և հստակ ձևակերպված լինելու հասկացողություն: Որպես իրավագիտակցության հակապատկեր հանդես է գալիս իրավական նիհիլիզմը: Չարժեքներազնահատելի իրավական նիհիլիզմի վտանգավորությունը ո՛չ իրավական գաղափարախոսության, ո՛չ էլ առօրեական գիտակցության ոլորտում: Իրավական քարոզչության խնդիրը կայանում է ոչ միայն նրանում, որպեսզի բնակչության լայն խավերին ծանոթացնեն գործող օրենսդրության բովանդակության հետ, այլև նրանում, որ հասարակական-քաղաքական դաստիարակության ամբողջ համակարգում մշտապես ցույց տալ իրավունքի սոցիալական արժեքը և դերը քաղաքացիական հասարակության կյանքում»⁹:

Որպես բնակչության իրավագիտակցության բարձրացման նպատակ մեր կողմից առաջարկվում են հետևյալ նպատակահարմար մեխանիզմները.

1. հաշվի առնելով այն իրողությունը, որ ԼՂՀ-ում գործում են մի շարք նրիտասարդական հասարակական կազմակերպություններ, այդ թվում նաև իրավաբանական, կարելի է համառոտ գործունեության արդյունքում պատրաստել բրոշյուրներ, որտեղ հստակ ձևով կնշվեն մարդկանց իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես նաև դրանց խախտման դեպքում համապատասխան մարմիններին և պաշտոնատար անձանց դիմելու կարգը.

2. ներկայումս ԼՂՀ-ն պատրաստվում է ընդունել ներքին համար կենսական նշանակություն ունեցող իրավական մի փաստաթուղթ՝ Սահմանադրությունը, որը պատեհ առիթ է հանդիպել բնակչության հետ՝ հատկապես գյուղական բնակավայրերի, որտեղ ավելի քիչ են տեղեկացված հիշյալ փաստաթղթի մասին, և անհրաժեշտ տեղեկատվություն հաղորդել: Այս կապակցությամբ արդեն որոշակի քայլեր կատարվել են մեր՝ Արցախի նրիտասարդական կառույցների անդամների նախաձեռնությամբ և հանդիպումների միջոցով Սահմանադրության վերաբերյալ տեղեկություն ենք հաղորդել ազգաբնակչությանը, որը կշարունակվի մինչև ԼՂՀ Սահմանադրության նախագծի ընդունումը: Ընդամին, որպես առաջին փորձ կազմակերպվել է հանդիպում ԱրՊՀ ուսանողության հետ և պատասխաններ տրվել առաջադրված հարցերին.

3. կարելի է դիմել Արցախի Հանրային Հնուստարնկերությանը՝ պատրաստել հաղորդում, որի ընթացքում կմեկնաբանվեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու պարտականությունները համապատասխան մասնագետների կողմից.

4. դիմել ԿԼՄ նախարարությանը հաճախակի կազմակերպել մրցույթ-օլիմպիադաներ «Իրավունք» թեմայով, որի ընթացքում առաջնակարգ տեղեր գրաված մասնակիցները կստանան դրամական պարգևներ, պատվոգրեր, և ինչու չէ նաև որոշակի արտոնություն իրավաբանական ֆակուլտետ ընդունվելիս.

5. հոգեբանների միջոցով հասարակությանը հատու դարձնել այն գաղափարը, որ իրավագիտակցության ոչ պատշաճ, ցածր մակարդակը հանգեցնում է նրան, որ մարդիկ չիմանալով իրենց իրավունքները, ազատությունները և պարտականությունները, խախտում են ոչ միայն իրենց, այլև այլոց իրավունքները, ազատությունները և պարտականությունները և դրանով հոգեբանական ծանր վիճակի մեջ են դնում ինչպես իրենց ընտանիքի անդամներին, բարեկամներին, այլև հասարակության մյուս անդամներին.

6. իրավաբանական բաժնի ուսանողներին հնարավորություն տալ հաճախակի մասնակցելու ԱԺ-ում օրինագծերի կազմման, քննարկման և ընդունման գործընթացներին և որպեսզի այդ նույն ուսանողներն իրենց իմացածը փոխանցեն մյուս ֆակուլտետի ուսանողներին և իրենց շրջապատողներին՝ կազմակերպելով սեմինարներ, կլոր-սեղաններ և այլն:

Եվ այսպիսով, բազմակողմանիորեն կատարելով ուսումնասիրություններ, իրավամտածողության նոր տեսանկյունից համեմատելով իրավագիտակցության վերաբերյալ տարբեր իրավաբան-գիտնականների արտահայտած կարծիքները և համադրելով մեր տեսակետը, հանգել ենք հետևյալ եզրակացության.

1. մարդը, լինելով հասարակության բջիջը, օժտված է բնական անօտարելի և դրական իրավունքներով, որոնք թույլ են տալիս նրան արժանավայել ապրել հասարակությունում,

2. իրավագիտակցությունը հանդիսանում է անձի ինքնապաշտպանության այն միջոցն ու նրաշխիքը, որի օգնությամբ մարդն իրեն կարող է պաշտպանված զգալ հասարակությունում,

3. մարդն իրեն պաշտպանված կզգա հասարակությունում միայն այն դեպքում, երբ ոչ միայն անշեղորեն կատարի իր պարտականությունները և իրականացնի իր իրավունքները, այլև չխախտի այլոց իրավունքներն ու ազատությունները,

4. որքան բարձր է իրավագիտակցության մակարդակը, այնքան ամուր են օրինականությունն ու իրավակարգը պետությունում,

5. միայն բարձր իրավագիտակցությամբ օժտված հասարակությունն է հավակնում իրավական պետություն ունենալու նպատակին:

Ամփոփում

Ներկա դարաշրջանում շատ կարևոր է դարձել բնակչության իրավագիտակցության բարձրացումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության յուրատիպ եղանակ: Պատմական անգրքերը վկայում են, որ այնտեղ, որտեղ բարձր է եղել իրավագիտակցության մակարդակը, մարդիկ իրենց ավելի պաշտպանված են զգացել և նյութում առաջարկվող իրավագիտակցության բարձրացման եղանակները միտված են Արգախ աշխարհում որոշակի չափով իրավագիտակցության բարձրացմանն ու դրա միջոցով մարդկանց իրավունքների պաշտպանությանը: Թվարկված հիշյալ կետերը սպառիչ չեն և կան նմանատիպ այլ եղանակներ, որոնք հնարավորություն կտան մարդկանց պաշտպանված զգալ իր սնփական երկրում:

Резюме

В настоящий период времени, повышение правового сознания населения стало важным условием защиты прав человека. Историческое прошлое свидетельствует: там, где высок уровень правового сознания, люди чувствуют себя более защищенными. Предлагаемые в статье условия развития правоведения, направлены на повышение правового воспитания в Арцахе и, посредством этого, защите прав населения. Помимо перечисленных, существуют и другие подовые пункты, способные позволить гражданам чувствовать себя защищенными в собственной стране.

Ծանոթագրություն

1. Н.А.Апиян, С.Н.Апиян, Правосознание, правовое воспитание, правовая культура, Ер,2001, стр 26.
2. Общая теория права и государства, под ред.академика В.В.Лазарева, стр 195.
3. Общая теория права и государства, под ред.академика В.В.Лазарева, стр 196.
4. Պ.Պ.Պետրով, Յակ. Անրիին, Աֆորիզմներ, Եր 1989, էջ 591:
5. Н.А.Ильин, О воспитании национальной элиты, М., 2001, стр.178.
6. Теория государства и права, под ред. проф. М.Н.Марченко, Зерцало, ТЕИС 1996, стр.440.
7. Теория государства и права, под ред.профр.М.Н.Марченко, Зерцало, ТЕИС 1996, стр.441.
8. Մարքս, Ֆ.Էնգելս, Երկեր, Հ 3, էջ 440:
9. Н.А.Апиян, С.Н.Апиян, Правосознание, правовое воспитание, правовая культура, Ер.,2001, стр. 37.

18.	Развитие туризма в НКР в контексте сохранения, реставрации и использования культурно-исторического наследия <i>С.С.Саркисян</i>	71
19.	Դարձվածային միավորների ուսուցումը «Ռուս բանասիրություն» բաժնում <i>Կ.Ա. Հակոբյան</i>	75
20.	Ե. Չարենցը՝ մանկավարժ և տնտեսագետ <i>Ա.Մ. Աթաբեկյան</i>	80
21.	Вводные и вставные конструкции и их стилистическое использование <i>Л.Р.Бегларян</i>	86
22.	Развитие Чеховских традиций в прозе Сергея Довлатова (к 65-летию со дня рождения писателя) <i>Н.В.Аракелян</i>	88
23.	Работа с глаголами слухового восприятия <i>слышать</i> и <i>слушать</i> на практических занятиях в вузах <i>Л.Г.Петросян</i>	92
24.	К вопросу о развитии профессиональной коммуникативной компетенции у студентов неязыковых вузов <i>Д.С.Габриелян</i>	95
25.	К вопросу об определении гротеска в художественной литературе <i>С.В.Петросян</i>	100
26.	Типология прилагательных английского языка <i>С.Н.Огольцов</i>	106
27.	Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խաղաղարար միջնորդական առարկությունների ձևախոսումները և պետաշինարարական գործընթացները [ԴՀ-ում (1993 թ. ապրիլ-հունիս ամիսներին) <i>Տ.Վ. Հակոբյան</i>	114
28.	Ապագա ուսուցչի անձի՝ կառավարման և ինքնակառավարման գործունեության ձևավորման մանկավարժական պայմանները <i>Ռ.Չ. Աղաբեկյան</i>	122
29.	Հոգևբանական թրեյնինգի /վարժեցման/ ծագումը գործնական հոգևբանության և հոգևթերապիայի խմբային մեթոդների զարգացման ճանապարհին <i>Ա.Մ. Այրոյան</i>	125
30.	Զինվորական ծառայությանը նորակոչների սոցիալ-հոգևբանական հարմարման հիմնախնդրի շուրջ <i>Վ. Բ. Յարամիշյան</i>	130
31.	Основные направления научных исследований в области использования информационных и коммуникативных технологий в системе непрерывного образования Российской Федерации <i>И.В.Роберт</i>	137
32.	Բնակչության իրավագիտակցության բարձրացումը որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք <i>Ա. Հ. Հարությունյան</i>	144